ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

2026 թվականի հուլիսի 8 -ի թիվ 286 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ՉՔՆԱՂԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՄՀԵՐ ԴԱՎԹՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 160-րդ հոդվածներով, 164-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման հավելված 3-ի 61-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 9-ի N 1550-Լ որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի 20-րդ կետը, ՀՀ Արագածոտնի մարզի «Չքնաղի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Միեր Դավթյանի 2026 թվականի հուլիսի 6-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Չքնաղի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Միեր Դավթյանին տրամադրել ամենամյա երկարացված արձակուրդ 2025-2026 թվականների ուսումնական տարվա համար 25 աշխատանքային օր տևողությամբ՝ 2026 թվականի հուլիսի 13-ից օգոստոսի 14-ը ներառյալ:

2. Միեր Դավթյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Չքնաղի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել «Չքնաղի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսուցչուհի Աննման Մկրտչյանին:

3. Միեր Դավթյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի օգոստոսի 17-ից:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 7/9/2026 16:19:40 GMT+4

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ

2026թ. հուլիսի
ք. Աշտարակ